

ԵՐԵՎԱՆԻ ԴԵՄՈՔՐԱՏԻԿԱՆ ԴԱՐՈՒՆԴԱՆՈՒԹՅԱՆ ԳԵԼՈՒՄԻ

ՄՇԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈՔՐԱՏԻԿԱՆ ԴԱՐՈՒՆԴԱՆՈՒԹՅԱՆ ԳԵԼՈՒՄԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. 4 էս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք օ ն № 253.

Սովորաբար լինում է ամիսը 10—5 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից).

Ցայտարարությունները ընդունվում են ամիսը լեզուով.

Ցայտարարությունների համար վճարում են
խաբարանչիկ տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ է Ք օ ն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻՆԿԱՆ 1905 ԹԻՎԱՆԻՆ

(33-ԴՆ ՏԱՐԻ)

«ՄՇԱԿ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՆՈՒԹԵԱՄԲ

ամեն օր, բացի տոն և խմբագրատան օրերից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄԸ. «Մշակ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսականը նոյն-
պէս 10 ռ., տասն ամսականը՝ 9 ռ., ինն ամսականը՝ 8 ռ., 8 ամսականը՝ 7 ռուբլի, եօթ և վեց
ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու
ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի:

ՄՐՏԱՍԱՀՄԱՆԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է
վճարեն տարեկան 6 ռուբլ. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի
բաժանորդները՝ 10 ռուբլի:

Մշակին գրվել կարելի է ԽՐԱՏԱՐԱՆԱՆԸ. (Բաղարայան և Բաթումիայի փողոցների
անկիւնը): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գրվելու համար և տոնաարարի նամակներ
և ծրարներ ուղարկելիս, պէտք է գիմն հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ»
իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal «MSCHAK»:

Ցայտարարությունները ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա. Պ. Ա. Ռ. Կ. Բ. Ա. Մ. Ո. Ր. Դ. Ա. Գ. Ր. Ո. Ի. Թ. Ի. Ն. Զ. Է. Ը. Դ. Ն. Վ. Ո. Ի. Մ.

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Կարելի է գործողներ. — Ներքին ՏԵՍՈՒ
ԹԻՒՆ. Գրական տոն. Հասարակական հարցեր.
Թատրոն և երաժշտություն: Սօցիալիստ առե-
թով: Ներքին տարեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Պատերազմի շուրջը. — ՀԵՌԱՐԱՆՆԵՐ. — ՅԱՅ
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԿԱՐԻՔՆԵՐ ԵՒ ԳՈՐԾԱՂՆԵՐ

Մեր նախորդ յօդուածներում մենք խօ-
սեցինք մեր կարելիների մասին և ցոյց
տուրինք նրանց նշանակությունը ու նրանց
հերթական դարձած լինելը:

Հասարակական կարիքները ուսումնա-
սիրվում են լաւագոյն կերպով այն ժա-
մանակ, երբ նրանց ուսումնասիրութեան
համար հրաւիրված են լինում երկրի այն
բոլոր ոյժերը, որոնք ձեռնհաս են մի որ
և է օգտակար և նպատակայարմար նկա-
տողութեան անելու, մի որ և է նոր միջ-
ոյցներով թէ կարելիների բնատուրութեան
և թէ նրանց բաւարարութիւն տալու մի-
ջոցների մասին:

Իսկ այդպիսի լիակատար ուսումնասի-
րութեան մեծ ապւն կարող է նպաստել
հրապարակական խօսքը, մամուլը,
հասարակական քննադատութիւնը: Երբ
մամուլի մէջ ամեն մարդ, որ որոշ ասե-
լիք ունի, կը յայտնէ իր կարծիքը կեա-
նի կարիքների մասին, այն ժամանակ ոչ
մի բեղմնավոր միտք չի կորչի ասպարէ-
զից և իւրաքանչիւր նոր ձայն իր բարե-
բար դերը կը կատարէ կեանքի մէջ:

Մեր հայկական մամուլը գէտ դարգա-
ցած մամուլ չէ, բայց և այնպէս այն
փորձերը, որ մենք ունեցել ենք, մեզ հա-
մոզում են, որ հրապարակական խօսքի
և հասարակական քննադատութեան հե-
տևանքները և մեզանում եղել են և են ար-
դիւնաւէտ ու բեղմնավոր:

Մեր լրագրի ամեն մի օրինակ միջին
թուով ունի հինգ վեց ընթերցող: Եթէ
կան այնպիսի բաժանորդներ, որոնք միայն
կրնան են օգտուում լրագրից, կան և այն-
պիսի օրինակներ, որոնցից իւրաքանչիւրը
կարդացվում է 8—10 և ավելի անձերից:
Մենք, կարծում ենք, չափազանցած չենք
լինի, եթէ ասենք, թէ ներկայումս «Մշ-
ակը» ունի 15,000—20,000 ընթերցող:
Եւ եթէ այդ մեծ թուի մի նշանակու-
թեամբ չէ մասնակցում գրական գործու-
նէութեան և միայն կարդում է տպա-
ւոր կեանքով, մամուլի յարուցած հար-

ցերով և աշխատում է կարելիին չափ ի-
րականութեան մէջ, իր գործունէութեան
շրջաններում մեծ թէ փոքր չափով իրա-
գործել որոշ տեսակէտներ և ազդել տե-
ղական հարցերի լուծման վրա:

Հրապարակական խօսքի զարգացումը
մեր հասարակութեան զարգացման ամե-
նախորդ գործոններից մէկն է: Եւ մենք
կը ցանկանայինք, որ մեր երկրի մասուր
և բանիմաց ոյժերը աշխատէին օգտուել
այդ գործոնից առաջ մղելու և ապարէզ
հանելու այն կարիքները, որոնք առաջ
են եկել կեանքի մէջ: Եւ մի քանի հա-
զար և տասնեակ հազար ուղեղներ միա-
սին գործում են, նրանք կարող են իս-
կապէս նպաստել փողովորդի և երկրի ճոխ
զարգացման:

Մենք հրաւէր ենք կարողում մեր երկրի
ինտելիգենցիային գործակցելու մեզ հրա-
պարակական խօսքի ասպարէզում մեր
երկրի և փողովորդի բարգաւաճման համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆ ՏՕՆ

Առաջ էլ շատ հազուադէպ էին լինում այդ
տոները մեզանում, իսկ վերջին տարիներս ա-
ւելի ևս հազուադէպ երևոյթների կարգին են
անցել:

Գրական տոնը... Ո՛ւր, ինչպէս, ինչ ա-
ռիթով կատարել նրանց: Գրականութիւնը
ստեղծ, անշարժացած: Եւ գնալով նա ման-
րանում, փորձանում է: Չարմանում ևս թէ
գետ ինչպէս է նա պահում ինքն իրան: Ըն-
թերցողը դարձել է անխորհուրդական: Չը կայ,
անհետացել է ճշգրտիւնը ուղած ընթերցող-
բարեկամը: Եւ գրողներն էլ ընթերցողների
տրամադրութեան նս ենթարկվել: Մի ժամա-
նակ պահանջվում էր կել, հեղուկութիւն, մի
ժամանակ չէին հարցնում թէ ինչպէս են գը-
րում, այլ հարցնում էին՝ ի՞նչ են պաշտպա-
նում և ի՞նչպէս են պաշտպանում: Այժմ այդ-
պիսի հարց ու փորձ չը կայ: Այդպիսի պա-
հանջ չը կայ:

Տօնել, բայց ինչը տօնել...

Տօնակատարութեան համար յայտնի տը-
մադրութիւն է հարկաւոր: Երբ կեանքի մէջ
գարնանային եռանդ է աթուռ, երբ պողա-
բերութեան սրբազան խորհուրդը անդադար
ստեղծագործում է նոր և նոր բողոքներ, ծի-
լիք, այդ ժամանակ ամեն ինչ տրամադրված
է տօն կատարելու, այդ ժամանակ չէ մոռա-
վում, այլ օրհնութիւններով մեծարվում է
իւրաքանչիւր ստեղծագ. ոչ ոք սկզբունք, որ

կեանքի հոգեկան զարգերի վրա անկաշնու-
ն է մի բան, յոյսի մի թիթե ժպիտ է պատճա-
ռում:

Բայց ինչ կարելի է սպասել ցուրտ ու
սառցապատ ձմեռային իրականութիւնից: Ա-
մեն ինչ սառած, մեկուսացած, պտղաբերու-
թեան խորհուրդը մեռած, իւրաքանչիւր մէկը
խորատագրված իր հոսկան կեանքի մէջ, երջա-
նիկ նրանով, որ ապրում է, առանց պահանջ-
ների, առանց պարտաւորութիւնների...

Մի քանի շաբաթ առաջ թիֆլիսում կա-
տարվեց մի համեստ, ընտանեկան երեկոյթ:
Տեղական մի ուսու լրագրի խմբագրութիւնը
փորձում էր հեռացողներին պատուել կամե-
ցողներին տրված էր մի այսպիսի հարաւո-
րութիւն. — վճարել փող և նստել ընթերցի
սեղանի մօտ, որի շուրջը հաւաքված էին: Ի
հարկէ, պիտի խօսէին, պիտի իրանց զգաց-
մունքները արտայայտէին իրեն բաժակաճառ,
իբրև կենացի բարեմաղթութիւններ: Եւ եղան
շատ այդպիսի ցանկացողներ: Գրական ընթ-
երքը բաւական աշխոյժ էր:

Ինչ հասարակական միտք ծածկեց կենաց
թափերի արանքում: Ինչ ունէին ասելու
ձեռնային անշարժութեան անկիւններից
դուրս եկած, ցուրտ, տաքի և կեանքի կարօտ
մարդիկ:

Նրանք գովեցին, փառաբանեցին ասպարէ-
զից հեռացող խմբագիրներին: Ամբողջ ընթ-
րող դանիճը երախտագէտ էր: Բայց ինչի
համար, որ բարեբաւարութեան համար:

Ո՛չ գրական և հրապարակախօսական փայ-
լուն տաղանդ կայ մէջտեղ, ոչ գիտնականի,
մարտնչողների կրակոտ թափը, ոչ նոր սկզբ-
ունքների, նոր աշխարհայեացքների մարգա-
րէներ: Ամենքը դիմում էին խմբագրներին և
ստում նրանց: Դուք ազնիւ, շիտակ մարդիկ
էիք, դուք հաստատ մնացիք մի ուղղութեան
վրա, դուք երբէք չը դաւաճանեցիք:

Այսպէս: Ահա ինչ պիտի հարցնէ մեզանից
այսպէս լաւագոյն ժամանակների մարդը:

— Այո, այսպէս, — կը պատասխանէ մենք:
Սա, գիտե՛ք, անհասկանալի կը լինի ապա-
գայ սերունդին: Նա, մեզ դատելով, պիտի ա-
սէ. — Միթէ ազնուութիւնը, շիտակութիւնը
այդքան խորթ է մարդկային բնութեան, որ
տօնել պէտք է նրանց: Չեն դաւաճանել, և
զրա համար փառք Աստուծու: Սա մեր ի-
դէպն է, Բայց ծիծաղելի չէ՞ այդ իդէալը:
Չգիտե՛ք ամեն մէկը, իբրև մարդ, պարտա-
ւոր է լինել ազնիւ, շիտակ, և երբ դուք կա-
տարում էք ձեր այդ պարտաւորութիւնը, երբ
դուք հաստատ էք մնում, չէք շեղվում ձեր
ճանապարհից, չէք դաւաճանում ձեր միան-
գամ իւրացրած սկզբունքներին, — ես զրա հա-
սար խոնարհ երկրպագութիւն եմ ասելու ձեզ:

Ծիծաղելի է դա ուրիշ ժամանակների, ու-
րիշ հասարակական կարգերի տեսակէտից:
Բայց մեր ժամանակի համար ոչ, ծիծաղել-
ի չէ:

Երբ անմահական, սուրբ իդէալի տեղը բը-
նում է սովորաբարական հաշիւը, երբ մի կտոր
իւզոտ հացը, փափուկ անկողինը վաճառք է
հանում մարդու ամենասուրբ ստացուածքը —
միտքը, երբ կեանքի «անիծված հարցերի» մէջ
տանջվողի վրա լրբաբար ծիծաղում է և ստա-
ւոր քան լիօնութիւնը, անտարբերութիւնը,
բթութիւնը, մենք, այդ համատարած երևոյ
թից զգլած, գնում որոնում ենք մենաւոր,
հազուադէպ շաբաթ աշխատաւորին, որ շի-
տակ է, ազնիւ է, ինքն իրան չէ վաճառում և
խոր հատաչանքով գլուխ ենք տալիս նրան...

Ճիշտ այսպիսի մի գրական տօն կատարվեց
մի քանի օր առաջ Օսովկայում: Դիկտմսերի
19-ին դուրս եկաւ «Русская Мысль» ամսագ-
րի 300-րդ գիրքը: Դա նշանակում էր, որ
ամսագիրը ապրիլ է ամբողջ 25 տարի: Եւ
այդ օրը տօնեց ուսուցչ գրական աշխարհի
մի մասը: Սովորաբար շնորհաւորութիւններ
ընդունեց անձամբ ներկայացողներից, ստա-
ցաւ բազմաթիւ շնորհաւորական նամակներ և
հեռագիրներ: Ամենքը երախտագիտութիւն էին
յայտնում ամսագրի մատուցած մեծ ծառայու-

թեան համար: Իսկ այդ ծառայութիւնը եղել
է այն, որ նա արգարութեան, մարդկային ի-
րաւունքների, առաջադիմութեան գործն է ա-
ռաջ տարել ծանր, ճնշող պայմանների մէջ,
եղել է շիտակ ու ազնիւ, չէ դաւաճանել իր
կոչման:

Մի և նոյնը: Տարբերութիւն կարող է լի-
նել միայն չափերի և ընդունակութիւնների
մէջ:

Եւ 300 հաստատիր գրքեր տուած խմբագ-
րութիւնը իր համար ամենալաւ վարձատրու-
թիւնը այդ միտքերան վկայութիւնները պի-
տի համարէ: Մա հասկանալի է, սա բնական է:
Ճիշտ որ մեծ, աչքի ընկնող ծառայութիւն
այն պայմանների մէջ, որոնցից կազմված է
ժամանակակից կեանքը: Երջանիկ պիտի լինի
այն գրողը, այն խմբագրութիւնը, որ, նայե-
լով իր անցեալին, կարող է հաստատ ու հը-
պարտ ասել թէ հաւատարմ է մնացել իր
դաւանութեան ու սրբութեան, իր մտքին ու
զգացմունքին: Անպատա, ճնշող հանգամանք-
ների ազդեցութեան տակ նա չէ թուլացել, չէ
տափակացել, շարունակ նայել է իր առաջ-
նորդող աստղին և ոչինչ ազնիւ ջանք չէ խը-
նայել նոյն իսկ դաժան պայմանների մէջ էլ
իր ընդունակութիւնները, որքան հնարաւոր է,
ուժեղ կերպով արտայայտելու:

Հասարակ պարտաւորութիւններ են, բայց
երախտագիտութեան արժանի, սրտի խորքից
ողջունվող: Տեսէք թէ շնորհաւորողներից մի
քանիսը նոյն իսկ ինչ բան են համարում ամ-
սագրի արժանաւորութիւն: Ամսագիրը, ա-
սում են նրանք, իր ընտանիքի մէջ խմբել է
գրչի նկարչներին, բարեխիղճ ուսումնասի-
րողներին, մարտնչողներին:

Այս էլ ծառայութիւն է:

Այո, ընթերցող, գրողներ, գրականութեան
զանազան ճիւղերում աշխատողները կարօտ
են մի ընտանեկան յարկի, որի տակ նրանք
կարող են զգալ իրանց լաւ պատասխարված,
խնամքով, ուշադրութեամբ, ընկերական վե-
րաբերմունքով շրջապատված: Այդպիսի յար-
կի ամեն տեղ չը կան: Ամեն տեղ չէ կարելի
զտնել այն շնորհութիւնը, որ նոր բողոքներ է
հանում մայր հողից, հովանաւորում է նրանց,
զարգացնում է, առաջ տանում:

Չէնց այդ օջախներն են պակասում: Օջախ-
ներ, ուր մի աստուծու են երկրպագում, մի
զաղափարով են տաքանում, ուր մի տեսակ
պարտաւորութիւն են պաշտում, այն է՝ ամեն
մէկի և ամենի համար շիտակ, ազնիւ աշ-
խատանք, եռանդ, ընդունակութիւն, անվախ
ու բացարձակ դաւանութիւն հրապարակով:

Ապագայ սերունդը, ճիշտ է, կը գործառայ
որ մենք տօնում, մեծարում ենք այսպիսի ա-
ռաքինութիւններ: Դաւաճաններ չէինք — շնոր-
հակալութիւն մեզ: Ցիւրը ատում է ինքը — շնոր-
հակալութիւն: Շնորհքով օժտված գաղափա-
րակից մարդուն փողոց չի կը շարունակ — էլի
շնորհակալութիւն:

Բայց միթէ ապագայ սերունդը մեզ չի հա-
կանայ:

Միթէ մեր ձեռքը չը պիտի հասնէ մեր ա-
պագայ սերունդին իբրև անցեալի սառն,
թմրած իրականութիւն...

Լ.

ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

I

Ինքնիզեցնիայի հասարակական դեր
Ինչ համար մեծ պարագոյս է դարձել մեր
ինտելիգենցիայի խաղաղած այժմեան դե-
րը: Երբ արտասանվում է ինքնիզեցնիա, ին-
քնիզեցնիա խօսքը, մեր առաջ ինքն ըստիւրեան
պատկերանում է մի դատակարար, որ ամենից
առաջ պէտք է լինի պրոգրեսիւս, առաջադի-
մական և հետաքար, պէտք է ունենայ փորք
ի շատ հեծկողքաւորական ձգտումներ, կամ,
աւելի լիզին ասած, նրա գործունէութիւնը
պէտք է կրէ դեմոկրատիական բնատուրութիւն:
Սակայն ոչ ոքի համար դատանք չէ, որ
մեր ինտելիգենցիան (մենք խօսում ենք մեր
ինտելիգենցիայի մասին en masse և ոչ նրա

մասնաւոր անհատներ կամ խմբեր (մասին), որքան էլ պարզեցնուի և շրջապատի համեմատութեամբ, բայց իր էութեամբ նա հետեւում է բուժօգնական-կուլտուրական նպատակներին: Այդ տեսակետից և պէտք է նկատել ունենալ ինտելիգենցիայի հասարակական դերը: Դրանով և բացատրվում է այն տարօրինակ երևույթը, որ ինտելիգենցիան, թէև ընտրելով բնաւորութեան՝ պրոգրեսիստ, բայց, իրարայայ, նրա և զեմօգնականի ու պրոլետարիատի մէջ մեծ հակառակութիւն, անտագոնիզմ գոյութիւն ունի: Ինտելիգենցիան՝ կապիտալիստ է, բայց նա նոյնպէս հակառակորդ է հանդիսանում աշխատավորին, ինչպէս և կապիտալիստը: Ինչպէս է ծագում այդ հանգամանքը. ինչ գործօններ են յետզրջել այդպէս ինտելիգենցիայի բնաւորութիւնը, որ նա կանգնել է բուրժուական հողի վրա և յարմարվել է բուրժուական կենքի պայմաններին:

Այդպէս է ոչ միայն մեր, այլ և ամեն տեղերի ինտելիգենցիան. այդ է պատճառը, որ այդ հարցը, այն է ինտելիգենցիայի հասարակական դերի հարցը սաստիկ հետաքրքրում է լաւագոյն մտածողներին, փիլիսոփաներին և և հրապարակախօսներին: Այդ խնդրով, ի թիւս այլոց, զբաղվում է և գերմանացի գիտնական Կառլ Կլեյնը:

Ներկայումս, ասում է նա, անտագոնիզմ, հակառակութիւն կա ինտելիգենցիայի և պրոլետարիատի մէջ. որքան էլ շատերը կամենան հերքել այդ հակառակութիւնը, բայց նա կայ և գոյութիւն ունի: Այդ անտագոնիզմը այլ տեսակի է, քան անտագոնիզմը աշխատանքի և կապիտալի մէջ. Ինտելիգենցիան կապիտալիստ չէ: Դիմել է, նրա կենքի մակերեսով բուրժուական է և նա ստիպված է ծախել իր աշխատանքի ոյժը: Դիմել է, նա շատ անգամ ինքն է շահագործվում կապիտալիստի կողմից և կրում է որոշ սոցիալական ստորացում, բայց նրա դրութիւնը, նրա աշխատութեան պայմանները—պրոլետարիական չեն: Պրոլետարիան զգում է իրան ուժեղ և մեծ, երբ նա կազմում է իր զօրեղ և մեծ օրգանիզմի մի մասը. նա մղում է իր կռիւն մեծ անձնագործութեամբ, իբրև մասն մի անանուն մասնաւորի, առանց ի նկատի ունենալու անձնական շահը, կատարելով իր պարտականութիւնը ամեն մի պաշտօնում, կամաւորապէս ենթարկվում է կարգապահութեան: Սակայն այդպէս էլ ինտելիգենցիան. նա մաքուր է միայն արգելանքների, փաստերի օգնութեամբ. նա կարգապահութիւն ճանաչում է միայն մասնաւորի և ոչ ընտրեալ հոգեւորների համար, իսկ իրան, ի հարկէ, նա համարում է այդ ընտրեալ հոգեւորների թիւում: Այդ է պատճառը, որ ինտելիգենցիան անպայման անհրաժեշտ է համարում իր համար իր անձնաւորութեան արտայայտութեան կատարեալ ազատութիւն: Այժմեան ինտելիգենցիայի իսկական աշխարհայեցողքը Նիցշէի փիլիսոփայութիւնն է, իր գերմարդի պաշտամունքով, որովհետեւ այդ փիլիսոփայութիւնը յարմար է նրա ձգտումներին, որովհետեւ այդ փիլիսոփայութիւնը բարոյութիւն է անձնաւորութեան կատարեալ ազատութիւն և ցած ու արհամարհական է համարում անձնաւորութեան ամեն մի ենթարկումն հասարակական որ և է մեծ նպատակի:

Ուրեմն ժամանակակից ինտելիգենցիայի բնորոշ յատկութիւնը իր անձնաւորութեան պաշտամունքն է և հասարակական մեծ իդէալների բացակայութիւնը:

Դիմել է այս նկարագրութիւնը: Թող պատասխանեն մեր ինտելիգենցիաները: Մենք միայն դնում ենք հարցը:

Գարձրեց նրանց մեր նորակազմ երաժշտական բնակ գարգիւր:

Ներկայումս քառաձայն երգեցողութեան պատկերը մի որոշ աստիճանով տարբացել է հասարակութեան մտքի մէջ և ոչ միայն չեն հնչում նախկին հակառակորդների ձայները, այլ և ամենուրեք լսվում է պահանջ մտցնելու քառաձայն երգեցողութիւն թէ կենդանական և թէ այլ կերպ խմբական երգեցողութեան մէջ: Դժբաղդաբար՝ դեռ շատ քիչ տեղերում է աշտոյի կազմակերպելու լուրջ երգեցիկ խմբեր նոյն իսկ կենդանական երգեցողութեան համար. իսկ ինչ վերաբերում է ժողովրդական երգերին՝ նրանց համար կամ բոլորովին գոյութիւն չունեն երգեցիկ խմբեր, կամ եղածները կրում են պատահական ձեւերակութիւններ կնիք իրանց վրա:

Այդ կողմից գնահատելի են մասնաւոր այն ջանքերը, որ անում է Պօղոս Կարա-Մուրզա, ժողովրդով ժամանակ առ ժամանակ իր հանգուցեալ եղբոր երգեցիկ խմբերի բեկորները և նրանց հետ միացնելով նոր ոյժեր կազմակերպելու համարներ իր եղբոր մշակած երգերից:

Հասարակութեան համար, Կարա-Մուրզայի համբերութեամբ, աւելի գրաւիչ է անվերջ կան երգերը. եւ հասկանալի է ինչու եւրօպական երգերը ունեն բազմաթիւ մշակութիւններ և շատ ընտիր արտայայտութիւններ թէ օպերային և թէ կոնցերտային բեմերի վրա: Իսկ բուն կովկասեան ժողովրդական երգերը դեռ նոր նոր են ենթարկվում երաժշտական մշակութեան և ցոյց տալիս այն պահները, որ նրանք պարունակում են իրանց մէջ:

Վերջին համբերում ժողովրդական եղանակներից աշխատելիս ունեցան «Լէփօ», «Յէ», «Միջնամ», «Կարդ կոչիկ», «Օյ Նազան ըմ», «Ջիւլի ու զինչ», «Երբիկ»: Եւրօպական ոգով կազմված եղանակների երգեցողութիւնը ունեցաւ պայմանական աշխատելիս:

Մշակութեան կողմից շատ լաւ էր «Միջնամ» (բառերը պատկանում են աշուղ Ջիւլիսին). այնտեղ կան բազմաթիւ ներուժիւններ գեղեցիկ ձևով ամփոփված ընդհանուր հիւսնածքի մէջ: «Վարդ կոչիկ» գեղեցիկ եղանակ է, բայց նա երգվում է չափազանց ծանր և տրիստ եղանակով: Դա սխալ է: Այդ երգը պէտք է աւելի յորդոր երգվի և համապատասխան է որոշ քաղաքների, որովհետեւ նա վերցրած է պարերից: «Բայդ բարձր» երգը իր առանձին մասերում լաւ է մշակված և բնորոշ գծերով, բայց թույլ է ամբողջութեան կողմից: Կարա-Մուրզայի ներկայ համբեր ձոխ էր ծրագրով և ընդհանրապէս մեծ գոհութիւն պատճառեց հանդիսականներին: Բայց նկատելի էր մի բան, որ սովորած երգերը բաւականաչափ լաւ չէին սերտված: Միւսը եւս նախկին կոնցերտներում երգվածները և առհոն էին և արտայայտիչ և տպաւորիչ, նոր սովորածները հանդիսական էին խոչընդոտների և թուլացման երգի բնորոշ տպաւորութիւնը:

Մի քանի երգերում խմբի հետ երգում էին և սուրճեր՝ Տաշեան, Քէհեան, Տէր-Սահակեան և Յակոբջանեան: Սօսերը նպաստում են խմբական երգի գրաւչութեան և ցանկալի են խորհրդով: Մի ընդհանուր պակասութիւն ունեն սօսերը, այն է, որ նրանք չեն սերտվում երգի բաց բերանով, արտայայտիչ պոետիկութեամբ:

Լսում ենք, որ պ. Կարա Մուրզան դիտաւորութիւն ունի կրկնել իր համբեր թիֆլիսի ժողովրդական թատրոնի բեմերի վրա: Լաւ միտք է և ցանկալի է, որ իրագործվի:

Մերող

II

Կերակրի, գեկտեմբերի 26-ին, Հաւրբարում պ. Արաբեանի բնէնֆիսին խաղացվեց առաջին անգամ «Դօն Սէզար դը Բազան» դրաման, ծրագրողութեամբ: Նիթի բովանդակութեան և պիէսի արժէքի չարժէք երկար խօսքի ինչպէս յայտնի է՝ պիէսը չունի խոր իմաստ, և տիպերը բնորոշ ու լրիւ չեն, գործողութիւնները արհեստական կերպով կապուած:

Պ. Արաբեանին՝ իր բաւական աջող խաղով Դօն Սէզարի դերում նպաստեց ներկայացման: Լաւ էին նոյնպէս պ. պ. Սահարճեան, Սահարճեան (Մարկիզ):

Թատրոնը լիքն էր բազմութեամբ:

Յ. Ն.

III

Ալեքսանդրօպօլում կազմվել է սերողների մի խումբ, որը նպատակ է դրել տալ ժողովրդական մի շարք ժամանակին ներկայացումներ: Իր բաւական փորձ, սերողները գեկտեմբերի 19-ին ստեղծ մի ներկայացում Ալեք-

սանդրօպօլի քաղաքային իգական արհեստանոցի չքաւոր աշակերտուհիների օգտին: Կառավարին էր բժիշկ Տէր-Սահակեանը: Ներկայացին Մօյէրի կօմէդիան—«Ներկայացական Հիւանդ» և «Մանուկ Կատակ» վերջին ներկայացումը աջող անցաւ: Թատրոնը լիքն էր հասարակութիւնով:

Խ Օ Լ Ե Ր Ա Յ Ի Ա Ռ Ի Թ Ո Վ
(Նամակ Վերին-Աղայից)

Տգիտութիւն. անա մարդկութեան ամենամեծ թշնամին, որ դարեր շարունակ տիրել է նրան և շարունակում է դեռ իր աղէտաբեր բռնակալութիւնը: Անա մի աներեւակ յիշի հրէշ, որ հազարաւոր տարիներ մարդուն իր սուր ճանկերում բռնած, սղմում, չորացնում ու քամում է նրա մարմին և հոգու ոյժը: Նա խել է և խլում է մարդուց նա գոյութեան ամբողջ սնունդը և ապա նրա անպէտքացած դիակն անունգը ձգում:

Մանկեր մեր ժողովրդի մէջ. կը տեսնենք այնտեղ հարկաւոր գիւղեր այդ գազանի ճիրաններում կուչ եկած, քարացած միացած: Նրանք կարծէք մի ծպտուն, մի փոքրիկ շարժում էլ անելու իրաւունք չունեն:—չը լինի թէ դրանով վերջին նրա հանգիստը և իրանց համար աւելի վատ լինի:

Սակայն մի հարց. ինչո՞ւ մեր ժողովրդը «լուսաւորվածներից» վերցնում և իւրացնում է այդ բոլոր զգլիկ անտերը, որոնք ոչ միայն լուսաւորութեան արդիւնք չեն, այլ և նրա ճանապարհն արգելող խոչն ու խուժն են: Ինչո՞ւ արեւելքից, թղթախաղը, պոռնիկութիւնը, շաւլութիւնը, մօզան (ամեն բանի վերաբերմամբ) և այլն աճման հող շուտով զարնում են մեր ժողովրդի մէջ ու տարածվում, իսկ ճշմարիտ լուսաւորութիւնը—մարի և բարոյականութեան լուսաւորութիւնը—մերժվում է:

—Նրա համար, որ «լուսաւորութիւն» խօսքը սխալ են հասկանում, և, բացի դրանից, այդ բոլոր չարքերն են ընթացիկ բնաւորութիւն ունեն և որմի նման աճում են նաև այնտեղ, որտեղ ցորենի համար յարմար հող չը կայ:

Մեր գիւղերում ագիտութեան թանձր խաւարն այնպէս սարսափելի կերպով է բռնկվում միտքը, որ խելիք աչքերը չեն կարողանում ամենահասարակ երեւոյթները պարզորոշել:

Պատահում է, օրինակ, որ արևը կամ լուսինը խաւարում է: Օ՛, Աստուած չանի, որ այդ րօպէին մի օտար մարդ գիւղ մտնի: Կանանց լ ջը, հրացանների ձայնիւնը, պղինձների ձայնը, երեխաների աղաւելը և այլն մարդու շնորհուն են: Այդ բոլորը նրա համար, որ կենդանութեան ձայնը երկինք չէ հասել, և աստուածներն էլ մարդկութիւնը վերջացած կարծեղով, բռնում են արևին կամ լուսինն ու տանում, որպէս զի երկիրն այլ ևս չը լուսաւորեն:

Դրա վրա եթէ աւելացնենք գնացելի մեղա մաղձտ և դէպի տխրութիւն արամազրող զօղանջիւնը, որ եկելիցի է հրաւիրում արթնթիւն, կը տեսնենք գիւղի պատկերն արևի կամ լուսնի խաւարման ժամանակ:

Մի ուրիշ օրինակ. ներկայումս բոլորական գիտութիւնն այժմեան առաջ է գնացել, որ շատ հիւսնագութիւնների դէմ կարողանում է մարտել և նրանց մագիլները գոհերի մեծ մասին կորցնել: Իսկ մեր գիւղերում (յաճախ աղաքներում) օգտվում են մարդկութեան և փոքրիկների շնորհող այդ փրկարար գիտութիւնից:

Ցաւելով պէտք է պատասխանենք—ոչ, Բագմանդաւ ընտանիքի այրը ծանր հիւանդ երկար ժամանակ պառկած է անկողնում: Տան սինը նա է, տունը պահողը նա է: Բայց ում են դիմում տան այդ սինը կանգնեցնելու համար:

Չանգան «հէքիմ» պատանների, «գալլաւներին» (գալլիներին), «գալլիներին» (գալլիներին) և այլն, որոնք յաճախ միւս աշխարհն են ուղարկում թշուառ հիւանդներին կամ աւելի ծանրացնում նրանց վիճակը:

Ճշմարտութիւնը չը ծածկելու համար պէտք է տեսնել, որ մեր գիւղերում երեւմն միայն դիմում են բժիշկի, բայց այնքան ուշ, որ մինչև վերջինի: Գալը, բանը բանից անցկացած է լինում:

Միթէ մի և նոյն ագիտութեան պատճառով՝

*) Մեր գիւղերում նշանաւոր է Նալի թուրք գիւղի գալլաբը:

**) Այստեղ առանձին հեղինակութիւն է վայելում Նուսրուտի մօլլան:

չէր, որ խօսեանք *) մեղնում այնքան աշտուրութիւն ունեցաւ:

Հայերիս մէջ շատ չնչին աշտուրութիւն գտաւ, որովհետեւ մեր հարեաններից կը թուրթեամբ, մաքրութեամբ, տնտեսականով համեմատաբար բարձր ենք:

Սօցիալիզմի զարգացման այստեղ նպաստում էին մի շարք պայմաններ, առանց որոնց նա անգոր կը լինէր իր շուրջը մահ սփռելու:—

1. Կեղտոտութիւնը, ար այդ սխալ միլիթոքներին սնունդ տուողն է, թագաւորում է այստեղ կատարեալ կեղտով, մանաւանդ թուրքերի մէջ, որոնց համար կեղտոտ ապրելը, կարծէք, մի պահանջ է, բնաւորութեան մի տարր: Ձր կայ մաքրութեան գաղափարն այստեղ:

2. Ուսնաւորութիւնը, որ կեղտոտութեան չափ և գուցէ էլ աւելի նպաստում է խօսերայի բացիլների սփռումը: Աշխան սկզբից մինչև ձմեռ նամուտ պարզ օրեր շատ քիչ ենք տեսել. միշտ մառախուղ, ամպ և մի քանի օր տեղացող յորդ անձրևներ:

3. Թանգութեան պատճառով սննդի մեծ պակասութիւնը, որ բոլոր հիւսնագութիւնների մայրն ու սնուցանողն է:

Դրանց վրա եթէ աւելացնենք թուրքերի օրովը, կը տեսնենք խօսերայի զարգացման իսկական միջոցաւորը:

Մի րօպէ ներթաւորենք, որ հայը կամ թուրքն անկարող էին մաքուրել այդ պատճառների դէմ, որովհետեւ կամ նրանցից չէին կախված և կամ մեծ ճիւղեր էին հարկաւոր: Բայց հօնա կարող էր անել այն, ինչ իր ձեռքումն է, օրինակ, ամենահասարակ բանը՝ դուռնաւ պարակվելուց: Տգիտութեան պատճառով գիւղերում խորը կերպով դեռ ևս հաւատում են ճակատաբեր ոյժին. իւրաքանչիւրի բերնից լսում են. «Ում ճակատին որ մահը գրված է, նա Աստուծո վրանի տակից ուր կարող է փախչել»: Ուստի և առանց վախենալու յաճախում էին նոյն իսկ վարակվածների տները: Դրա հետեւանքն էլ լինում էր այն, որ մէկը միւսից վարակվելով մեռնում էր, իր ագիտութեան զոհ գնալով:

Կոտորածի առաջը կարելի էր առնել, եթէ բժշկական օգնութիւնը հասնէր: Բայց ինչ անէր խելձ ժողովուրդը, երբ շատ գիւղերում մահվան այդ ճգնաժամին մի ֆիլղշեր էլ չը կար: Թէև կառավարութիւնը՝ գիւղերը ցրելու համար՝ անհրաժեշտ մի քանի դեղեր բաժանել էր, բայց «սեխն սապանն ինչ անի, խնին խրատն ինչ անի»: Այսպիսով մեր ժողովրդին մնում էր ձեռները ծալած սպասել բախտի անողը վճռին և առաջին հարուածից իսկ զոհ գնալ, առանց նրա դէմ կռւել կարողանալու:

Յակովբ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՆ

Կերակրի, գեկտեմբերի 21-ին, Թիֆլիսում տեղի ունեցաւ բժշկապետ Ս. Անանեանի թագումը: Դառնող վրա դրված էին ժող բան պաւկներ, որոնց մէջ կային Անանեան զարդի հոգաբարձութիւնից և աշակերտուհիներից, կովկասեան բժշկական ընկերութիւնից, միւրայիւսեան հիւանդանոցից, ընկեր բժիշկներից և ուրիշներից: Եկեղեցում դաժանական խօսք Արաքսեան քահանայ Բագրատունի, ցոյց տալով հանգուցեալի ծառայութիւնները մեր քաղաքային և շրջապատող հասարակութեան: Յուդարկաւորութեան մասնակից էր երկու սեռի մեծ բազմութիւն:

Յիշեցնում ենք հայ հասարակութեան, որ այսօր, ցերեկվայ ժամը 1-ին Արաքսեանի Ընկերութեան դահլիճում Հայոց Բարեգործական ընկերութեան «Երեւանի» ձրի և էժանագին ճաշարանի» օգտին լինելու է մանկական մեծ ու հետաքրքիր էլէքարական տօնաժառ:

«ԲԵՍ» լրագիրը լսել է, որ միմիայնորեքի կօմիտէի՝ գեկտեմբերի 12-ի ուղարկում անկարելի հարցերի առիթով կայանալիք ժողովների հնչեց առաջին նիստում իբր թէ հարց է յարուցվելու մասնակի ներկայացուցիչներին նիստերին ներկայ լինելու թղթ մաս:

«Բ. Ե.» լրագրին հաղորդում են Պետերբուրգից, որ վերջին օրերս զարգացական հասարակութիւններից մէկում ուսուցիչներից շատերը հետաքրքան տեսչի հետ ընդհարում ունենալու պատճառով: Տեսուչն ուսուցիչներից մէկին շատ կծու ձևով նկատում է. «Յս ձեզ հետ չեմ խօսում և խնդրում եմ լռել: Դուք այստեղ պօլիտիկայով էք պարապում և ոչ մանկա-

*) Մեղանում այժմ դադարել է:

Типогр. Т—ва С. Назарянца и К. п. ф. «ГЕРМЕСЪ». Мад. уд. № 15.